

## ՌԵՆԳԱԼԻՆ

## RENGALIN

Հումեոպատային դեղ

Դեղի օգտագործման հրահանգ  
(ներդիր-թերթիկ)

### Առևտրային անվանում

Ռենգալին

### Դեղաձև

Բերանի խոռոչից ներծծվող դեղահատեր

### Բաղադրություն

Յուրաքանչյուր դեղահատ պարունակում է.

ակտիվ բաղադրատարրեր՝

բրադիկինինի նկատմամբ աֆինային եղանակով մաքրված հակամարմիններ - 0,006 գ\*,

հիստամինի նկատմամբ աֆինային եղանակով մաքրված հակամարմիններ - 0,006 գ\*,

մորֆինի նկատմամբ աֆինային եղանակով մաքրված հակամարմիններ - 0,006 գ\*,

օժանդակ նյութեր՝ իզոմալտոզ - 0,506 գ, միկրոբյուրեղային ցելյուլոզ - 0,0275գ, մագնեզիումի ստեարատ - 0,0055 գ, անջուր լիմոնաթթու - 0.005225 գ, կոլոիդային սիլիցիումի երկօքսիդ - 0.00275 գ, նատրիումի ցիկլամատ - 0.00275 գ, նատրիումի սախարին - 0.000275 գ:

\*Երեք ակտիվ բաղադրատարրերի համապատասխանաբար 100<sup>12</sup>, 100<sup>30</sup>, 100<sup>50</sup> աստիճանի ջրասպիրտային նոսրացումների խառնուրդը շերտապատված է իզոմալտոզի վրա:

### Նկարագրություն

Սպիտակ կամ գրեթե սպիտակ, ամբողջական եզրերով, տափակ գլանաձև դեղահատ, որի երիզով կողմի վրա դրոշմված է RENGALIN, իսկ մյուս ակոսիկով կողմի վրա՝ MATERIA MEDICA:

### Դեղաբուժական խումբ

Այլ հակահազային դեղեր

## **Անատոմիական բուժական քիմիական ծածկագիր**

R05DB

### **Դեղաբանական ազդեցություն**

#### **Դեղադինամիկա**

Նախակլինիկական փորձարկումները ցույց են տվել, որ դեղի ակտիվ բաղադրատարրերը փոխակերպում են ընդերածին կարգավորիչների լիգանդ-ընկալիչային փոխազդեցությունը համապատասխան ընկալիչների հետ. մորֆինի նկատմամբ հակամարմինները՝ օպիատային ընկալիչների, հիստամինի նկատմամբ հակամարմինները՝ H<sub>1</sub> հիստամինային ընկալիչների և բրադիկինինի նկատմամբ հակամարմինները՝ B<sub>1</sub> բրադիկինինային ընկալիչների հետ, ընդ որում՝ բաղադրատարրերի զուգակցված կիրառումը ուժեղացնում է դեղի հակահազային ազդեցությունը:

Բացի հակահազային ազդեցությունից, Ռենգալինը՝ բաղադրության մեջ մտնող բաղադրատարրերի շնորհիվ, ցուցաբերում է հակաբորբոքային, հակաալոցային, հակաալերգիկ, սպազմոլիտիկ (հիստամինի և բրադիկինինի նկատմամբ հակամարմիններ) և ցավազրկող ազդեցություն (մորֆինի նկատմամբ հակամարմիններ): Ռենգալինը H<sub>1</sub> ընկալիչների հիստամինակախյալ ակտիվացման և B<sub>2</sub> ընկալիչների բրադիկինինակախյալ ակտիվացման փոխակերպման շնորհիվ, ընտրողաբար նվազեցնում է երկարավուն ուղեղի հազի կենտրոնի դրդունակությունը և արգելակում է հազային ռեֆլեքսի կենտրոնական օղակները: Ընկճելով թալամուսի ցավային զգայունության կենտրոնները՝ Ռենգալինը արգելակում է ցավային ազդակների փոխանցումը դեպի գլխուղեղի կեղև: Հյուսվածքային և պլազմային ակնոզենների (հիստամին, բրադիկինին, պրոստագլանդին և այլն) արտազատման նվազեցման արդյունքում Ռենգալինը ընկճում է ծայրամասերից եկող ցավային ազդակների հոսքը: Ի տարբերություն ափիոնային ցավազրկողների՝ դեղը չի առաջացնում շնչառության ընկճում, դեղային կախյալություն, չունի թմրաբեր և քնաբեր ազդեցություն:

Ռենգալինը, նվազեցնելով բրոնխոսպազմը, թեթևացնում է սուր ֆարինգիտի, լարինգիտի և բրոնխիտի դրսևորումները: Ազդելով հիստամինի և բրադիկինինի սինթեզի և պարարտ բջիջներից դրանց արտազատման վրա՝ դեղը թեթևացնում է ալերգիկ ռեակցիաներից առաջացած համակարգային և տեղային ախտանիշները:

#### **Դեղակինետիկա**

Ֆիզիկա-քիմիական անալիզի ժամանակակից մեթոդների (գազահեղուկային քրոմատոգրաֆիա, բարձրարդյունավետ հեղուկային քրոմատոգրաֆիա, քրոմատոմասսպեկտոմետրիա) զգայունությունը հնարավորություն չի տալիս որոշել դեղի ակտիվ բաղադրատարրերի պարունակությունը կենսաբանական

հեղուկներում, օրգաններում և հյուսվածքներում: Այդ պատճառով Ռենգալինի դեղակինետիկան տեխնիկապես անհնար է ուսումնասիրել:

### **Ցուցումներ**

Ռենգալին դեղը ցուցված է՝

- շնչուղիների՝ հազով և բրոնխոսպազմով ուղեկցվող սուր և քրոնիկական հիվանդությունների,
- գրիպի և սուր շնչառական հիվանդությունների ժամանակ խորխով (թաց) և առանց խորխի (չոր) հազի,
- սուր ֆարինգիտի,
- լարինգոտրախեիտի,
- սուր օբստրուկտիվ լարինգիտի,
- քրոնիկական բրոնխիտի,
- վերին և ստորին շնչուղիների այլ վարակաբորբոքային և ալերգիկ հիվանդությունների դեպքում:

### **Հակացուցումներ**

Ռենգալինը հակացուցված է դեղի բաղադրատարրերից որևէ մեկի նկատմամբ անհատական գերզգայնության դեպքում: Դեղի արդյունավետության և անվտանգության վերաբերյալ տվյալների անբավարարությամբ պայմանավորված՝ այն խորհուրդ չի տրվում կիրառել մինչև 6 տարեկան երեխաների շրջանում:

### **Կիրառումը հղիության և կրծքով կերակրման շրջանում**

Հղիության և կրծքով կերակրման շրջանում Ռենգալինի կիրառման անվտանգությունը ուսումնասիրված չէ: Կիրառման անհրաժեշտության դեպքում անհրաժեշտ է հաշվի առնել օգուտ/վտանգ հարաբերակցությունը:

### **Կիրառման ձևեր և դեղաչափեր**

Անհրաժեշտ է ընդունել 1-2 դեղահատ օրական 3 անգամ: Դեղահատն անհրաժեշտ է պահել բերանում մինչև դրա ամբողջական լուծվելը: Դեղը չի կարելի օգտագործել սննդի ընդունման ընթացքում: Հիվանդության ընթացքից կախված՝ դեղի ընդունման հաճախականությունը առաջին երեք օրվա ընթացքում կարող է լինել օրական 4-6 անգամ:

### **Կողմնակի ազդեցություններ**

Հնարավոր են դեղի բաղադրատարրերի նկատմամբ անհատական գերզգայնության ռեակցիաներ:

## **Գերդեղաչափում**

Պատահական գերդեղաչափման դեպքում հնարավոր է մարսողության խանգարում՝ դեղի բաղադրության մեջ առկա օժանդակ նյութերով պայմանավորված:

## **Փոխազդեցություններ**

Այլ դեղերի հետ անհամատեղելիության դեպքեր մինչև այժմ չեն գրանցվել:

## **Ազդեցությունը ուշադրություն պահանջող գործունեության վրա**

Ռենգալինը չի ազդում ուշադրություն պահանջող գործունեություն իրականացնելու և տրանսպորտային միջոցներ վարելու ունակության վրա:

## **Թողարկման ձև**

Բերանի խոռոչում տարալուծվող դեղահատեր: Պոլիվինիլբլորիդային թաղանթից և ալյումինե նրբաթիթեղից պատրաստված եզրագծված բնիկավոր բլիստերը պարունակում է 10 դեղահատ: Ստվարաթղթե տուփի մեջ տեղադրված է մեկ, երկու կամ հինգ բլիստեր՝ դեղի օգտագործման հրահանգի (ներդիր-թերթիկի) հետ միասին:

## **Պահման պայմաններ**

Պահել 25 °C -ից ցածր ջերմաստիճանի պայմաններում:

Պահել երեխաների համար անհասանելի և անտեսանելի տեղում:

Ռենգալինի ընդունման ընթացքում բլիստերը պահել դեղի տուփի մեջ:

## **Պիտանիության ժամկետ**

3 տարի

Դեղը չի կարելի կիրառել պիտանիության ժամկետը լրանալուց հետո:

## **Դեղատնից բաց թողնելու կարգ**

Բաց է թողնվում առանց դեղատոմսի:

## **Գրանցման հավաստագրի իրավատեր**

«ՆՊՖ ՄԱՏԵՐԻԱ ՄԵԴԻԿԱ ՀՈԼԴԻՆԳ» ՍՊԸ, Ռուսաստան, 127473, ք. Մոսկվա, Մամոտեչնի 3-րդ նրբ., տ. 9:

Հեռ./ֆաքս. +7 (495) 684-43-33:

## **Արտադրող**

«ՆՊՖ Մատերիա Մեդիկա Հոլդինգ» ՍՊԸ, Ռուսաստան, 454139, ք. Չելյաբինսկ, փ.  
Բուզուրուսլանսկայա, տ. 54: